*Արձանագրություն*

***«ՀԱՂԱՐԾԻՆ ԷՔՍՏՐԻՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրի վարչական տարածքում միաճոպան կախովի մարդատար ճոպանի /զիփլայն/ վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային 2-րդ լսման***

06 փետրվար, 2026թ. Թեղուտ բնակավայր

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի և Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N2343-Ն որոշման հավելվածի՝ 2026թ. փետրվարի 6-ին՝ ժամը 12:00-ին Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում /1-ին փողոց 34 շենք/ տեղի ունեցավ «ՀԱՂԱՐԾԻՆ ԷՔՍՏՐԻՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրի վարչական տարածքում միաճոպան կախովի մարդատար ճոպանի /զիփլայն/ վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային 2-րդ լսումը:

Հանրային լսմանը մասնակցում էին «ՇՄԱՓԿ» ՊՈԱԿ-ի մասնագետ՝ Ս. Կիզիրյանը, «ՆՈՎԱԼ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Թ. Նուրիջանյանը, Թեղուտի վարչական ղեկավար՝ Վ. Թամրազյանը, «ՀԱՂԱՐԾԻՆ ԷՔՍՏՐԻՄ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ա. Թամրազյանը, «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչներ՝ Ն. Հովհաննիսյանը, Հ. Սաղրյանը և այլոք:

Բացման խոսքով հանդես եկավ Ս. Կիզիրյանը, ողջունեց հանրային լսման մասնակիցներին, ներկայացրեց հանդիպման հիմնական նպատակը և փորձաքննական գործընթացի շրջանակներում իրականացված աշխատանքները: Հավելեց նաև, որ հանրային լսման ծանուցումից հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում հանրությունը կարող է իր կարծիքը, դիտողությունը կամ առաջարկությունը գրավոր կամ էլեկտրոնային տարբերակով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:

«ՀԱՂԱՐԾԻՆ ԷՔՍՏՐԻՄ» ՍՊԸ-ի տնօրենը ներկայացրեց նախատեսվող գործունեությունը, իսկ «ՆՈՎԱԼ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը ներկայացրեց նախատեսվող աշխատանքները, նշեց, որ գործունեության տարածքում կենդանիների ցամաքային միգրացիոն ուղիներ, Կարմիր գրքյան բուսատեսակներ և կենդանատեսակներ չեն հայտնաբերվել: Ներկայացրեց նաև նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և նախատեսվող միջոցառումները, որոնք հնարավորություն կտան այդ ազդեցությունները մեղմելու, չեզոքացնելու և նվազեցնելու:

Փորձագետը դիմեց «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչներին՝ նախատեսվող գործունեությանը իրենց կողմից տրված կարծիքի վերաբերյալ, որին ի պատասխան նշեցին, որ կողմ են գործունեությանը՝ բնապահպանական նորմերի պահպանման, հնարավոր ազդեցությունները մեղմացնող միջոցառումների կիրառման դեպքում:

Վարչական ղեկավարը ողջունեց գործունեությունը և նշեց, որ կողմ են նման ծրագրերի իրականացմանը, քանի որ այն և նոր աշխատատեղերի, և ավելի շատ մարդկանց այց է ապահովում դեպի մարզ, բնակավայր: Գործունեության վերաբերյալ այլ առաջարկություններ և դիտողություններ չներկայացվեցին, Ս. Կիզիրյանն ամփոփեց հանրային լսումը՝ շնորհակալություն հայտնելով ներկաներին մասնակցության համար:

Կից ներկայացվում է մասնակիցների ցանկը:

**Քննարկումների պատասխանատու և վարող՝**
**«Շրջակա միջավայրի վրա ազդեցության**
**փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ** -------------------------------------------- Սվետլանա Կիզիրյան
(ստորագրություն)

**Նախաձեռնող՝**
**«ՀԱՂԱՐԾԻՆ ԷՔՍՏՐԻՄ» ՍՊԸ** -------------------------------------------------
(ստորագրություն)

06.02.2026թ.

## ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑԱՆԿ

**«ՀԱՂԱՐԾԻՆ ԷՔՍՏՐԻՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Թեղուտ բնակավայրի վարչական տարածքում միաճոպան կախովի մարդատար ճոպանի /զիփլայն/ վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային 2-րդ լսում**

06.02.2026թ. Դիլիջան համայնք, Թեղուտ բնակավայր

| Հ/հ | Անուն Ազգանուն | Կազմակերպության անվանում/ բնակության վայր | Կոնտակտային տվյալներ | Ստորագրություն |
|---|---|---|---|---|
| 1. | Անժելիկա Կիրակոսյան | «ՇՄԱՓԿ» ՊՈԱԿ | 011/220-215 | |
| 2. | Վարդանուշ Բաղդասարյան | Թեղուտի վարչ. ղեկավար | 055 779995 | |
| 3. | Բաղդասարյան Սևակ | [illegible] | 044505044 | |
| 4. | Հովհաննիսյան Քնարիկ | «Հանրապետ» ԱԿ | 093146192 | |
| 5. | Ղազարյան Վերգին | Թեղուտի բնակիչ | 098308536 | |
| 6. | Կարեն Հովհաննիսյան | «Դիլիջանի ազգային պարկ» ՊՈԱԿ | 099-068-068 | |
| 7. | Հովհաննես Ավդոյան | «Դիլիջանի ազգային պարկ» ՊՈԱԿ | 055 75 77 78 | |
| 8. | | | | |
| 9. | | | | |
| 10. | | | | |
| 11. | | | | |
| 12. | | | | |
| 13. | | | | |
| 14. | | | | |
| 15. | | | | |
| 16. | | | | |
| 17. | | | | |